

րի առաջ, որոնք կաշառքի շնորհիւ լըք-
ցնում են հայոց զինվորը տղետ քահանա-
ներով. աշխատում է հաւատացնել, որ
կողմնակից է ժողովրդի իրաւունքի, բայց
չէ ամաչում պաշտպանել հոգեւոր իշխա-
նութեան կամայականութիւնը, որ ձգտում
է ոչնչացնել ընտրողական սկզբունքը թէ՛
զարգացնել թէ՛ եկեղեցու մէջ մինչև իսկ
յօրութեանը են սկսել գրեթէ քրական ազնիւ
բարքերի, մտքի ազատութեան, մամուլի
բարձր նշանակութեան մասին, և մի և
նոյն ժամանակ իրանց իւրաքանչիւր քայ-
լափոխում վայր են գցում զրականութեան
և մամուլի նշանակութիւնը, ծառայեցնե-
լով տպագրական խօսքը ամենաստոր
նը-
պատակներին, և ամենակեղծոտ զիտաւո-
րութիւններին...

Դա՛ կատարեալ աւել աւել ու թիւն է:
Եւ երբ մենք մի-մի անդամ մատնանիշ ենք
անում հայոց յետագէտ, փողոցային մա-
մուլի և նրա այժմեան ներկայացուցիչներին
այդ աւել աւել ու թիւն վրա՝ փոխա-
նակ վայելուչ պատասխանի և ազնիւ պո-
լէմիկայի՝ սկսվում է նոյն հին երգը, նոյն
կեղծոտ հոսանքը, — այդ հոյանքի, ստոր
ինսինուացիայի և փողոցային խեղկատակու-
թիւնների անկրկն հոսանքը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍԱԻԹԻՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՆ

I

«Հն ու թիւնը Ա կն ալ» — Յ. ձանիկեանի.
Թիֆլիս, 1895.

Վերնագիրը շատ թիւր հասկացողութիւն է
տալիս գրքի մասին Այն քաղաքի հնութիւննե-
րի մասին շատ քիչ բան կայ և, մեր կարծիքով,
աւելի լաւ կը լինէր, եթէ հնութեան, անցեալի
մասին եղած տեղեկութիւնները մասն չը լի-
նէին այդ աշխատութեան մէջ: Դրանք պատմա-
կան արժէք չունեն, որովհետեւ բաւականաչափ
չեն լուսաբանված, այլ դուր տեղից մեծացնում
են գիրքը: Հեղինակը բարեխղճութեամբ հաւա-
քել է այն բոլոր բերանացի աւանդութիւնները,
անէճքները, աղօթքները, ժողովրդական սովո-
րութիւնները, որոնք հարկաւոր են աղագրու-
թեան: Դրանց թիւը գրքի մէջ շատ մեծ է: Հե-
տաքերական են մասնաւոր այն երգերը, ասա-
ցուածքները, որոնք անփոփոխ գրի են առ-
նված: Եւ շատ լաւ կը լինէր, եթէ հաւաքողը, ժո-
ղովրդական այնպիսի բանաստեղծական ստեղ-
ծագործութիւնների մէջ, ինչպէս են հէթաթիւնե-
րը, բոլորովին չը խառնէր իր լեզուն: Շատ քի-
չերին է տուած իր լեզուով հէթաթիւ պատմելու
հնորձը, և ալ ձանիկեան, անշուշտ, այդ քիչերի
թիւն չէ պատկանում. նրա ոճը, լեզուն այնքան
թուրջ պոյսական են, որ հասկանալ շատ էլ
հեշտ չէ. բոլորովին անկարելի է, որ այդպիսի

Սպառնի տեղ գործ են անում ընտ օթ անու-
նով մի տեսակ ծառի սերմ, որ շատ լաւ մաք-
րում է բրդեղէն կտանները. այդ սերմը չորա-
ցնում են, փոխադրում և ջրով խառնելով կա-
շիկում: Սովորաբար, լուսացը անում են տղա-
մարդիկ, որովհետեւ կնոջ համար լուսացը անելը
ամօթ է համարվում. բայց տան միւս բոլոր ծա-
ռայութիւնները — փայտ, ջուր կրելը, ալիւր ա-
ղալը, եփելը, չալակ տանելը՝ կատարում են կա-
նայր:

Հարէ՛հները մէկ մէկու պատահելիս՝ առաջ բե-
րան բերանի տուած ծծում են միմեանց և հա-
մարում. յետոյ հարցնում են իրար և միմեանց
ընտանիքի օրովտարութիւնը: Երկու ճանապարհորդ
միմեանց հանդիպելիս, պարտաւոր են իմանալ
միմեանցից, թէ՛ ուր են գնում, ո՞րտեղից են գա-
լիս, ինչ են մտադիր անել. այդ բաները չը հարց-
նելը համարվում է ատելութեան և թշնամու-
թեան նշան:

Եթէ հասակով և աստիճանով վտրքը պա-
տահի իր մի ծանօթի հետ, կամ գնաց նրա
մօտ, պէտք է առաջ նրա ծունկը կամ ոտը
համբուրի, և երբ մենք նրա օրովտարութիւնը հարց-
նել, փոխանակ պատասխան տալու, պէտք է զը-
լուծի խոնարհեցի:

Հարէ՛հները վերին աստիճանի անհիւրասէր և
անզովթ ժողովուրդ են: Հիւրասիրութիւն ցոյց
են տալիս օտարականներին միայն այն ժամանակ,
երբ մեծ վարձատրութեան կամ ընծայի յոյս ու-
նեն և կամ երբ տէրութեան կամ երկրի իշխանի

լեզուն կարողանար արտայայտել ժողովրդական
բանաստեղծութեան բոլոր նրբութիւնները:

Յ. ձանիկեանի գիրքը, իբրեւ ժողովրդագրա-
կան անմշակ նիւթերի ժողովածու, իր ծառայ-
ութիւնը կը մատուցանէ մասնագէտներին: Հը-
րատարակչական ընկերութիւնը, որ տպագրել է
այս գիրքը, ունի և մի քանի այլ այսպիսի գրք-
քեր: Բայց երբ դուրս կը գան մարդիկ, որոնք
կօդավեն այս անմշակ նիւթերից: Մենք, հասա-
րակ ընթերցողներս, կարող ենք հետաքրքրվել
այս կամ այն կտորով — և աւելի ոչինչ: Հասա-
րակ ընթերցողներին տեսակէտից այդպիսի մի
ստուար հատորի (516 մեծագիր երես) հրատա-
րակութիւնը անհասկանալի է թուում: Բայց ըն-
կերութիւնը, ի հարկէ, հասարակ ընթերցողների
չանքը չէ ունեցել աչքի առաջ, այլ այն նշա-
նակութիւնը, որ ունեն ժողովրդագրական նիւ-
թերը գիտութեան համար: Հասկանալի է, որ
հրատարակչական ընկերութիւններն են միայն
ձեռնհաս տպագրել այնպիսի գրքեր, որոնք շատ
սահմանափակ շրջանների համար են նշանակ-
ված: Մնում է ցանկալ, որ ժողովրդագրական
նիւթեր հաւաքողները պատրաստութիւն ունե-
նային, աւելի լաւ ըմբռնէին իրանց կոչումը և
արձանագրէին այն ամենը, ինչ բան ժողովրդա-
կան է, բնորոյ: Ուշադրութիւն պէտք է դար-
ձնել մասնաւոր ժողովրդական բանահիւտութեան
վրա. և գրել այնպէս, ինչպէս լսում է ականջը:

II

«Ար օրի օրացոյց» 1896 թիւ. Բագու, 1895.

Ներկայ տարվայ «Արօրի օրացոյցը», — երբորդ
տարին է որ հրատարակվում է այդ օրացոյցը, —
պարզապէս կամ է մի անգլին թիւ ամենամիտոյ
սխալներին: Մի կողմ թողնելով, որ այդ օրացոյ-
ցը դուրս է գալիս մարտ ամսին, փոխանակ
դուրս գալու տարվայ սկզբին, սրբագրութիւնը
և ուղղագրութիւնը, մասնաւոր երկրորդ, յաւե-
լուածական մասում, այնքան անհոգ և անխիտ
է կատարված, որ միանգամայն աղաւաղված է բո-
վանդակութիւնը: Իսկ վիճակագրական տեղեկու-
թիւններն և թուանշանները վերաբերմամբ ցոյց
տուած անհոգութիւնը արդէն անտանելի է: Այս-
պէս օրինակ, Աւստրո-Ունգարիայի ընդհանուր
աղագրականութեան թիւը ցոյց է տուած 4,322,000,
Գերմանիային — 49,428, և այլն:

Այս անհիւրի անհոգութեան հնորձիւ «Քրանս-
գերմանական պատերազմը» վերնագրով յաւե-
լուածական մասը, որ ինքն ըստ ինքեան մի հե-
տաքերական և խնամքով կազմված ու մշակ-
ված յօդուած է ներկայացնում և կարող էր ըն-
թերցանութեան օգտակար նիւթ լինել միանգա-
մայն կորցնում է իր արժէքը: Անթիւ և անհա-
մար աղաւաղումներից և տպագրական սխալնե-
րից ահա մի քանիսը: Փոխանակ լինելու Վալա-
դան անցեալի դէմ, աւելած է Վալադան ու

կողմից հրաման լինի: Վերջին դէպքում գիւղա-
ցիները պարտաւոր են կերակրել նորեկ հիւրե-
րին. հակառակ դէպքում օտարականը պէտք է
իր ուտելիքը և պաշարը հետ տանի, այլպէս
գիւղացիները ոչ ուտելու բան կը տան, ոչ էլ
պատկերու տեղ:

Բարբոթ վերին աստիճանի ծոյլ, չորեքօրթ
քծնող են և բարեկամութեան մէջ միանգամայն
անխտանալի: Օտարականի սիրտը գրաւելու և
նրան հաճոյանալու համար, արտաքուստ ամեն
տեսակ կեղծաւարական ցոյցեր են անում. նրա
խօսքին չեն հակառակում, զովում են ասածը,
նրա կրօնը և մինչև այն աստիճան առաջ են
գնում, որ իրանց պատրաստ են ցոյց տալիս նրա
կրօնը ընդունելու: Բայց դրանից նրանք չափա-
զանց ստախօս են և մի մեծ մոլութիւն ունեն
— գողութիւնը, որից զուրկ չեն նոյն իսկ հոգեւոր-
ականները:

Իբրեւ կիսավայրենի ազգ, հարէ՛հները խիստ
վրէժխնդիր են և տեղին ու պարագային համե-
մատ մարդասպանութիւնը օրինաւոր են համա-
րում: Եւ երբ մարդասպանութիւնը թշնամութեան
կամ վրէժխնդրութեան համար է կատարվում,
սպանութիւնից յետոյ դիակը չեն թաղում, այլ
թողնում են զազաններին կերակրու: Սակայն
երկրի օրէնքով մարդասպանի պատիժը — գլխա-
տուրութիւն է, եթէ արեան տէրը չը կամենայ
փոխարէնը դրամական տուգանք ստանալ: Եթէ
մահապարտը փախչելու լինի, նրա տեղ բան-
տարկում են օրդուն, աղզականին ու չղթայում,

ցի ալի դէմ: «Քաղաքում տիրեց հանդարտու-
թիւնը» խօսքերի տեղ տպված է. «Քաղաքում
տիրեց հանրապետութիւնը»: Փոխանակ լինելու
«մի գուցէ վտանգուի նորեկը» հանրապետու-
թիւնը, տպված է «մի գուցէ վտանգուի նստե-
լով հանրապետութիւնը»:

Թուրքը, արտաքին տեսքը, տպագրութիւնը և
պատկերները անցեալ տարիների նման չընդ և
գեղեցիկ են: Գինը 70 կօպէկ:

Հ. Ա.

ՆԱՄԱԿ ԱԼԵԿՍԱՆԴՐՈՎՈՒՅ

Մարտի 3-ին

Այսօր, մարտի 3-ին, ս. Փրկչի տղայաց զարդի
ընդարձակ դահլիճում կայացաւ քաղաքացիների
խառն ժողով, Նորին Կայսերական Մեծօրինան
թագաւորութեան տօնը արժանաւոր կերպով տօ-
նելու և մի օր և է հիմնարկութեամբ այդ անմա-
ռաց օրվայ յիշատակը յաւերժացնելու համար:
Առաւօտեան 10 ժամին, երբ նշանակված էր
ժողովը, Ալեքսանդրօպօլի ամբողջ ինտելիգեն-
ցիան, վաճառական և արհեստաւոր դասակարգե-
րը լցրել էին զարդի ընդարձակ շինութիւնը:

Գաւառականի հիւանդութեան պատճառով
ժողովը, ժամը 11-ին, բացեց նրա օգնականը Ի.
Մ. Միրզիբեկ, հետեւեալ խօսքերով. «Պարոններ,
այսօր, բաղդի բերմամբ ինձ վիճակված դերով
ես անչափ բաղդաւոր եմ դուռ ինձ. ես պէտք
է նախագահեմ այն ժողովին, ուր ինձ հետ միա-
սին դուք, Ալեքսանդրօպօլի քաղաքացիները,
պէտք է ցոյց տաք այն համակրանքն ու սէրը,
որը ձեզանից ամեն մէկն ունի դէպի մեզ հովա-
նաւորող Գահը և նրա ամենաորոշմած Գահա-
կալը»:

Ժողովի ժամանակ եղան հետեւեալ առաջար-
կութիւնները. բանալ տարրական դպրոցներ, բա-
նալ գրադարան-ընթերցարան և կիրակնօրեայ
դպրոցներ, ուղարկել պատգամաւորներ և սար-
քել ժողովրդական դրօսանք:

Ժողովականներից բնաղէտ Գ. Տէր-Պետրոսեան
հարց բարձրացրեց, թէ արդե՞ք այդ բացվելիք
դպրոցները պէտք է պահուին քաղաքի, թէ այս
դէպքի առիթով միանուազ հաւաքված փոխորդ:
Եւ երբ նախագահը յայտնեց, թէ քաղաքի հաշու
պէտք է պահվեն՝ Տէր-Պետրոսեան աւելացրեց.
«Առաջէք խնդրեմ, մենք իրաւունք ունինք, այս-
պէս մասնաւոր կերպով, առանց նախապէս ար-
տօնված լինելու այդ իրաւունքներով քաղաքա-
յին փողերից յատկացնել այս կամ այն նպատա-
կին, ստիպելով ազազայ վարչութեանը օրինա-
ւոր ճանաչել և վճարել մեր այդ ծախսերը»:

Իրաւաբան Մ. Պապազանեան յայտնեց, որ ին-
քը նախ քան ժողովի բացվելը՝ ծանօթա-
ցաւ ընդհանուր արամադրութեան հետ, և
կարող է ասել թէ բոլոր ներկայ եղողների
կամքն է, որ մեծ տօնի յիշատակի յաւերժացման

առիթով հարկաւոր դրամադրուի, որքան և լի-
նի, իրանք անձամբ վճարեն, անկախ քաղաքի
ազազայ վարչութիւնից, կամ մի ուրիշ օր և է
կողմնակի աղբիւրից: Երիտասարդ իրաւագէտի
խօսքերից յետոյ, ժողովականները միաձայն յայտ-
նեցին, որ Պապազանեան իսկապէս իրանց ցան-
կութիւնների թարգմանն է:

Ապա Պօղոս Ձիթողեան, աչքի առաջ ունե-
նալով նախ քաղաքացիների նիւթական դրու-
թիւնը, առաջարկեց պատուել մեծ տօնի յիշա-
տակը, յանուն թագաւոր Կայսեր մի գրադա-
րան-ընթերցարան և նրան կից կիրակնօ-
րեայ դպրոց բանալով: Պ. Պապազանեան, շատ
գեղեցիկ և նպատակայարմար գտնելով դրադարան-
ընթերցարանի բացումը, մանրամասնաբար պար-
զաբանեց նրա անհրաժեշտութիւնը Ալեքսան-
դրօպօլի հասարակութեան համար: Նա ասաց.
«Գրադարան-ընթերցարանը և նրան կից կի-
րակնօրեայ դպրոցը ոչնչով պակաս օգտաւէտ
հիմնարկութիւն չէ, քան տարրական դպրոց-
ները: Դա մի անհրաժեշտ պահանջ է Ալեքսանդ-
րօպօլի հասարակութեան համար. և բացի սրա-
նից, բանը նրանում չէ, թէ մենք ինչո՞վ ենք կա-
մենում երախտագիտութիւն և սէր արտայայտել,
այլ նրանում, թէ ինչքան անկեղծ են մեր զգա-
մունքները»:

Կարճ ընդդիմախօսութիւններից յետոյ ընդուն-
վեց այս առաջարկութիւնը, որից յետոյ նախագահը
հարցրեց ժողովականներին. «Կու՞ք սրանով բա-
ւականանում էք, թէ կը կամենայիք մի ուրիշ
գործ էլ կատարել»: Պ. Ալմոյեան առաջարկեց
Նորին Կայսերական Մեծօրինան թագաւորութիւնը
հնորհաւորելու համար անպատճառ ներկայացու-
ցիչներ ունենալ մայրաքաղաքում, թէ և գաւա-
ռական քաղաքների համար այս բանը պարտա-
ւորական չէ: Առաջարկութիւնն ընդունվեց միա-
ձայն, և ընտրվեցին ներկայացուցիչներ Գր. Խա-
լաթեան և Գ. Տէր-Պետրոսեան:

Ապա ցանկութիւն յայտնեցին՝ այդ երեք օրը
ըստ արժանի ուրախ անցկացնել, կազմակեր-
պելով զանազան հրապարակութիւններ, զօրքի և
քաղաքացիների ճակկերոյթներ, ժողովրդական
դրօսանքներ, դասախօսութիւններ, խրախմբք, և
այլն և այլն: Կարգադրիչ մասնաժողովի հա-
մար ընտրեցին մեր ինտելիգենտ քաղաքացինե-
րից 12 հոգի, ինչորեւի մի և նոյն ժամանակ
չը սահմանափակել այդ թիւը և այդ ընտրուած-
ներին իրաւունք տալ հարկաւոր դէպքում հրախ-
րել օգնիչ ոյժեր: Ընտրուեցին՝ Մ. Պապազա-
նեան, Ա. Կորնեան, Տ. Իւլեաչեան, Յ. Կոստա-
նեանց (նշ ուտուցիչ), Յ. Տէր-Միրաբեանց, Պ. Ձի-
թողեան, Յով. Կրամեան, Յով. Խալաթեան,
Խ. Խաչակեան, Գ. Տէր-Մարտիրոսեան, Զ. Կոս-
տանեան և Յ. Գեղամեան:

(Կը չարունակվի)

մինչև որ մահապարտի տեղը ցոյց տան, կամ
ինքը ստիպվի դալ. իսկ եթէ ոչ այս լինի և ոչ
այն՝ այն ժամանակ նրա փոխարէն մահուան են
դատաւարաւոր և գլխատու օրդուն կամ աղ-
զականին: Միայն մի դէպքում յանցաւորը ա-
զատվում է — երբ արեան տէրը կամ ամբաստա-
նողը ապստամբվում է կառավարութեան դէմ կամ
մի ապստամբ իշխանի կողմն է անցնում:

Գաղատաստական կազմակերպութիւնը հարէ՛-
հների մէջ նահապետական և պարզ է: Ունեն
արդեօք հարէ՛հները որոշ դրամա օրէնսդրու-
թիւն՝ այդ անպիսի լուծու են մեր ունեցած աղ-
բիւնները. բայց այս յայտնի է, որ դատաստանի
ժամանակ նրանք գլխաւորապէս ղեկավարվում
են հին կտակարանի օրէնքներով: Որոշ դատաս-
տանատուններ և դատաւորներ չը կան, քանի որ
ամբողջ հարէ՛ ժողովուրդը աստանդական կեանք
է վարում. ամեն մարդ կարող է դատաւոր լի-
նել, եթէ վիճողները համաձայնութիւն յայտնեն:
Ջառարակ ժողովուրդը, մասնաւոր հիւրերում,
այդպէս էլ վարվում է: Երբ երկու հոգու մէջ
վէճ է ծագում. նրանք ընտրում են մի երրորդ
անձն, որ կօչվում է տան և ա, որը սովորաբար
լինում է գիւղի աւաքան (հոգեւոր գործերի
տեսուչ, բահանայ) կամ մի ծերունի, երբեմն
մինչև անգամ մի պատանի. ահա այդ տան և ա-
յի առաջ վարում են իրանց դատը, հրապարա-
կով, ժողովրդի ներկայութեամբ: Երկու կողմն
էլ վիճաբանում են, վկաներ են բերում, վա-

տեր են առաջարկում. հարցաքննութիւնից յե-
տոյ՝ տան և ահա հարցնում է ներկայ եղող հասա-
րակութեան կարծիքը. դատողութիւնը և դրա հա-
մեմատ արձակում է իր վճիռը: Մեծ մասամբ աշ-
խատում են գործը վերջացնել հաշտութեամբ
Սակայն եթէ այդ չէ աջողւում, կամ դատողները
գոհ չեն մնում տան և այի արձակված վճիռից՝ այն
ժամանակ դատը հարցնում են թագաւորի, կամ
երկրի կուսակալի և կամ արեւնայի ու նրա փո-
խարորդ չէ կի ի ատեանը: Այդ արդէն դատաս-
տանական վերին ատեանն է: Տանալի առաջ
վարած դատերը որ և է ծախքի կարող չեն.
բայց երբ դատը փոխադրվում է վերին ատեանը՝
մեծ ծախքերի պէտք կայ, որովհետեւ պէտք է
տուրք վճարել թագաւորին, արեւնային և մեծ
իշխաններին, որոնց երկրի մէջ պատահում է
դատը: Երբ յայտնվում է, որ դատը պէտք է
գնայ վերին ատեանը, գիւղապետը կապում է
թէ՛ ամբաստանողի և թէ՛ ամբաստանվածի մի
թիւը չղթայով — եթէ յանցանքը կամ վէճը
ծանր և բարդ է, — և կամ չուսանով, եթէ թեթեւ
է պարզ է, և ուղարկում է ատեանը. տան և ալ
լինողն էլ ուղարկվում է այնտեղ իբրեւ վկայ:
Ատեանի առաջ պահանջատէրը կամ ամբաս-
տանողը պէտք է առաջացնան իր պահանջը և
ամբաստանութիւնը վկանելով. իսկ եթէ վկայ
չը կայ, այն ժամանակ ամբաստանվածը պէտք է
երդում ուտի Աստուծու անուան վրա:

(Կը չարունակվի)

ՆԱԽԱԿ ԵՎԱՏԵՐԻՆՈՒԹԻՒՆ

Մարտի 5-ին

Գաղթականության հոսանքը մեզ մոտ էլ հասնում է: Անցեալ փետրվարի 27-ին, անհաստատ քայլերով, երկու երիտասարդ մտեցան ուսումնականին և բանալով դռները, ներս մտան: Առաջին հայեացքից մարդ իսկոյն գուշակու էր, թէ ինչ-քան նրանք հոգեպէս ճնշուած են կեանքի անյաջող դէպքերից:

Նրանք, դիմելով այստեղի գործակալ Գէորգ քահանայ Զաքարիանցին, առաջին. «Տէր հայր, 70 հոգու չափ հայ գաղթականներ Անապայում քաղցի դո՞ւ են գնում, եղէք բարի և օգնութեան հասէ՛ք այդ դռներին»: Եւ ապա նրանք նկարագրեցին այն բոլոր տանջանքները, որոնց ենթարկվել են գաղթականները: Այդ նկարագրութիւնը այնքան դառն էր, որ մարդ քարափոխ պէտք է լինէր որ կարողանար անտարբեր դանդաղ փախանալ դիմաց մի քանի մարդկանց և օգնութիւն խնդրեց: Երեք ժամից յետոյ արդէն պատրաստ էր 191 բուրլէփող և 150 բուրլու զանազան հագուստներ:

Առանց ուշանալու, նոյն երեկոյին, հայր Զաքարիանցը ճանապարհ ընկաւ դէպի Անապա և երեք օր մնալուց յետոյ վերադարձաւ: Նա այդ փողով գնել էր ավել և բաժանել թիրաբանայ գաղթականներին, մանրամասն հաշիւը հայր Զաքարիանցը ներկայացրեց նուիրատուներին: Գաղթականները եղել են 70 հոգի, որոնցից 42 կանայք և 28 այր մարդիկ, հաշուելով և երեխաները: Տեղացիների վկայելով, նրանց մէջ եղել են այնպիսիները, որոնք 3—4 օր քաղցած են մնացել:

Ա. Տ.-իս.

ՆԱԽԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, մարտի 4-ին

Խնդրեմ «Մշակի» մի անդիւնում զետեղէք այս երկտողը.

«Մուրճ» ամսագրի յունվարի համարում Գ. Երեմեյեւի «Մարդ-Առիւծ» առասպելական պոէմայի մասին գրախոսութիւն կար, որտեղ պ. Լ. Մ. ասում է. «Մարդ-Առիւծ» մի գեղարուեստական հերիաթ է, առանց աւելորդաբանութիւնների և կարգապիտան է հետաքրքրութեամբ... բայց մենք չը կարողանանք հասկանալ, թէ ինչու պ. Տէր-Վաթեանը կարծիք է համարել փոխադրել այդ երկասիրութիւնը և ոչ տալ հայ ընկերացիին նրա թարգմանութիւնը, նա այդ պարզ և որոշ պէտք է յայտնէր... Մենք ափսոսում ենք, որ «Մարդ-Առիւծ» մի փոխադրութեան տեղ նա մեզ չէ տուել նրա հարազատ թարգմանութիւնը...»

Հարկաւոր եմ համարում այս երկտողով բացատրել յարգելի ընկերացիներին, որ «Մարդ-Առիւծ» առասպելական պոէման վրացերէնից հարազատ թարգմանութիւն է, իսկ փոխադրութիւնն այն պատճառով է յիշված զբերի վրա, որովհետեւ բնագործը ոտանավորով է գրված և ես ոտանավորը փոխադրել եմ արձակի:

Գ. Տէր-Վաթեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բարձրագոյն հրամանով, առաջիկայ թագադրութեան ժամանակ կառավարիչ սենատի մի ժամանակաւոր ատենան պէտք է կազմվի Մոսկվայում, որին պէտք է յանձնվի մանիֆէստների, բարձրագոյն հրամանների և ուկրաինների հրատարակութեան պաշտօնը:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսից բաւական մեծ թիւով հայ գաղթականներ եկան Բաթում:

«Արարատի» փետրվարի համարում կարդում ենք, որ վ. հասկառ կաթողիկոսը թողալով է հանգուցեալ Մարգար Պապովեանի կտակական արձեռնիքի առժամանակեայ կերպով գործադրել այն 50,000 բուրլի գումարի տոկոսը, որ Պապովեանը կտակել է թիրաքաց Զայաստանում մի գոյրոց հիմնելու նպատակով, առայժմ այդ տոկոսով Երզրումի Սանատարեան վարժարանում որդեգիրներ պիտի սնանկեն:

Երեկ, մարտի 13-ին, նահանգական դատարանում սկսեց ընդլիկ օրիորդ Պամպուկեանի յայտնի գործը: Նախագահում էր Բիկով: Նիստը դադարեց:

«НОВОСТИ» լրագրի մարտի 6-ի համարում տղաված է մի թղթակցութիւն Թիֆլիսից, որը միանգամայն հերքում է այն տէնդէնցի օգ լուրերը, որ ուսուսաց խաւարամիտ մամուլը տարածում էր Թիֆլիսում վերջին ժամանակներս տեղի ունեցած մի քանի սպանութիւնների առիթով: Յօդուածագիրը ցոյց է տալիս, որ այդ դէպքերը չանտաժի հետեանք են և ուրիշ ուղիւն:

Ինչպէս յայտնի է՝ անցեալ տարի աշնան, Քուրթայիում պատահեցին մեծ անկարգութիւններ, և այդ քաղաքի հրէայ ազգաբնակչութիւնը ենթարկվեց յարձակումների վրացիների կողմից: Ամբողջ չորս օր հրէաները դանդաղ էին պաշարված վիճակի մէջ, և միայն Քուրթայիի զինուորական նահանգապետի կարգադրութեան չնորհիւ՝ ապստամբութիւնը զսպվեց և կարգը վերահաստատվեց: Այդ անկարգութիւնների զխաւոր շարժառիթը այն էր, որ Լուկա Կոստաւով անունով մի վրացի երիտասարդ սպանվեց հրէաների ձեռքով: Ոստիկանութիւնը ձերբակալել էր 7 հրէայ իբրեւ Կոստաւովի սպանողներ, որոնք և բանտարկվել էին: Մարտի 4-ին, ինչպէս հաղորդում է «Кавказ» լրագիրը, Քուրթայիի նահանգական դատարանում ընկնեց այդ գործը, որը տեղի ունեցել էր 2 օր: Մարտի 6-ին դատարանը յայտնեց իր վճիռը, որով մեղադրված հրէաներից երեքը դատապարտվում են երեքամսեայ բանտարկութեան, երկուսը՝ երեքամսեայ ձերբակալութեան սլովիցիայի մէջ, իսկ երկուսը բոլորովին արդարացրված են:

Կիրակի, մարտի 10-ին, Կրուժոյի դահլիճում երկուստարդ ընդգէտ վ. Լուկեկիւի կարգաց իր երկու օրը դատախոսութիւնը՝ «Երկրքի» մասին: Դատախոսութիւնը լուսաբանվում էր բազմաթիւ պատկերներով: Ինչպէս և առաջին անգամ, այս անգամ էլ դատախոսը ունեցաւ մեծ աջողութիւն: Նոր հրէայ մատչելի և պարզ եղանակի, որով Դահլիճը կատարելապէս լի էր, և բազմաթիւ ցանկացողներին ստիպված էին մերժել՝ տեղ չը լինելու պատճառով: Երրորդ և վերջին դատախոսութիւնը «Հրաբուխների և երկրաշարժի մասին» Լուկեկիւի կը կարգայ առաջիկայ կիրակի, մարտի 17-ին, նոյն դահլիճում:

Մարտի 10-ին, կիրակի, Գէլաթի վանքում տեղի ունեցաւ վրաց Գաբրիէլ եպիսկոպոսի թաղումը մեծ հանդէսով և շուքով: Թաղման ներկայ էին վրաստանի էկզարքի վաղեմի, Մինդրէ-Լիայի եպիսկոպոս Գրիգոր, 300-ից ավելի քահանայ, բազմաթիւ պատգամաւորութիւններ, զանազան հաստատութիւնների ներկայացուցիչներ և ժողովրդի ահալին բազմութիւն:

Մարտի 15-ին, երեկոյեան ժամը 8-ին, զինուորական շտաբի շինութեան մէջ նշանակված է ուսուց կայսերական աշխարհադրական ընկերութեան կովկասեան բաժնի նիստը: Այդ նիստում ընկերութեան անդամ Պաստուխով կը կարգայ մի զեկուցադրի՝ Արագած սարի գլուխը բարձրանալու մասին, իսկ Ս. Ջէլինսկի կը հաղորդի մի քանի վիճակագրական տեղեկութիւններ Դամախու մասին:

Պետական զանձարանը այլ ես չէ տալու մի բուրժուանոց և երեք բուրժուանոց թղթադրամներ, և կարգադրել է նրանց փոխարէն հատուցանել արծաթի և ոսկի դրամներ: Վճռված է մի բուրժուանոց և երեք բուրժուանոց թղթադրամները բոլորովին հանել գործածութիւնից:

Ներկայ մարտ ամսվայ ընթացքում՝ մտադրութիւն կայ Մոսկվայում կազմել մի ժողով, քննելու համար այն խնդիրը՝ թէ ինչու Ռուսաստանում գրա-մատիական արուեստը ընկել է և չէ կարողանում զարգանալ, մինչդեռ մի ժամանակ թատրոնական գրուածքները հասարակական մեծ դեր էին կատարում և թատրոնի կրթական կուռը շատ զգալի էր: Ժողովը զետաւորութիւն ունի քննել նոյնպէս և մի քանի գործնական խնդիրներ գաւառական թատրոններ կազմելու և զերբասանական խմբեր կազմակերպելու մասին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. Պոլսից մեզ հղում են, «Պ. Բլան» և Պ. Հը-պէլ, Կարմիր խաչի քարտուղարն ու զանձարան-տը, թէպէտ նախապէս արտօնութիւն ստացան Հայաստան երկրաւ, սակայն վերջը կառավարութեան կողմէն արգելուեցան: Առ այժմ օր. Կլարա Պարթեն պիտի գործէ անգլիական և ֆրանսական դեսպանատններու աջակցութեամբ:

Կ. Պոլսից հաղորդում են, որ Զինի-փաշան հրաժարվել է ընդունել նախագահի պաշտօնը, Հայաստանում մտցնելի ընթացիկների վերահսկող յանձնաժողովի մէջ: Երկու կն կրում, որ սուլթանը կը նշանակի այդ պաշտօնի համար Եւֆի-բէյին, եւրօպական դեսպանների բողոքի հակառակ:

Կ. Պոլսից հաղորդում են գերմանական և ֆրանսիական լրագիրներին, որ քերդերը թիրաքաց Հայաստանում կատարեցին նոր գաղանդութիւններ և անկարգութիւններ: Բայց դրանից նոյն իսկ թիրաքաց կայսրութեան մայրաքաղաքում տրամադրութիւնը չատ յազմած է և երկու կն կրում, որ պալատական յեղափոխութիւն կը պատահի, որը կարող է վերջնաւ նրանով, որ իշխանութիւնը կանցնի ընթացիկներին և ներողա-մտութեան աւելի քիչ հակամիտ անձանց ձեռքը: «Եթէ այդ լուրերը հաստատվեն, ասում է «Figaro» լրագիրը, նորից հանդէս դուրս կը գայ Արեւեան հարցը, որ ճնշում է սարսափելի կերպով Եւրօպային»:

Կ. Պոլսից մեզ հաղորդում են, որ եւրօպական դեսպանատնների մէջ մեծ դժգոհութիւն է տիրում Ալեքսանդրի սպանված 9 զէյթունցիների պատճառով: Դեսպանները մտադիր են այդ առիթով խիստ զիմու անել Բ. Դրան:

Տեսական դրութիւնը և վաճառականութիւնը Փոքր-Ասիայում անկարագրելի վատ է. հասնում փաստ, որ հաղորդում են մեզ Կ. Պոլսից. «Թագաթի մէջ առևտուրը մինչև այսօր աշխարհի վրա նման չը տեսնուած ձև մը ստացած է. քիչ թէ շատ ապրանք ունեցող հայ խա-նութեանները նկուղներու մէջ պահած իրենց վաճառքը գաղտնի կը ծախեն. 5 դրուց արժէք ունեցող բանը յափշտակչները կը պահանջեն որ մէկ կօպէկով արուի իրենց, եթէ մերժուին՝ բռնութեամբ կը յափշտակեն: Անբաստիտ մէջ խանութները մինչև այսօր փակ են, որովհետեւ հայ առևտրականները ծախելու վաճառք չունին: Իբր թէ կողպուածները ետ դարձնելու հրաւիրած են հայերը, որ իրենց ապրանքներուն տէր ըլլան, խանութպանները կերթան կը տեսնեն, որ 400 ոսկիի ապրանք կորսնցողին ձեռքը հազիւ թէ 5 ոսկիի ապրանք պիտի սնանին»:

ՆԱԽԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՅ

Ֆոլքի վեր, փետրվարի 29-ին Երբ ձեռքերնիս կառնեք անցեալ դարերու մէջ ապրող ժողովրդի կարգ ու կանոնները, օրէնքներն ու կրօնները, և կը կարգանք՝ կը սկսեմ երբեմն շարունակ ծիծաղել, երբեմն խղճալ նրանց նախապաշարմանց և մուկ դատութեանց վրա: Սակայն 19-րդ դարում դրամի կատարած դերը կրնայ մեզ աւելի ծաղրալի ընել թէ հին դարերում ապրող ժողովրդի առջև և թէ 20-րդ դարու զաւակաց, և քիչ վերջ մարդկութիւնը տոկոսմամբ պիտի հաւատայ, թէ քաղած է այսպիսի ոճրագործ դարձ մը:

Դրամը, որ ոչ կուտուի, ոչ կը հազուադէպ ունի գերազանց գեղեցիկութիւն մը, կամ ինչ-է ինչ օգտակարութիւն մը մարդկային ազգի՝ բայց այսօր անիծեալ դրամի կողմին շարժում է՝ ճշմարտութիւնը, բարոյութիւնը, գեղեցիկութիւնը, առողջութիւնը, զօրութիւնը, գիտութիւնը, քաջութիւնը, և մարդկային աշխիւ և անգլիս յատկութիւնները իրենց բոլոր ձեւերովը կարծած վաղում են ցորեկ գիշեր, և դեռ չեն կարող ձեռք բերել զայն: Աս բոլորն ալ հրապարակ ծախու հանած է.

այժմ աշխարհում կարելի է ունենալ բոլորն ալ միայն ստակով: Ազնիւ մարդուն ազնիւ չեն կոչում, երբ դրամ չունի, և քաջ մարդուն քաջ չեն կոչում, երբ դրամ չունի, առանց դրամի իրաւունք է ալ զրկուած ես:

Եւ ահա այսօր դրամը իր թաթերը դնում է միլիոնաւոր դիակներու վրա, պետութիւններու, երկրներու, քաղաքներու վրա, վեր ցցվում է աստղէն ու արեւն շատ վեր և աստուածանում է, իր բռան մէջ ունենալով մարդկութեան սիրտն ու հոգին, խեղճ ու միտքը. քամում է անգլիկ սեղմումով և խոնարհեցնում է իր Բաադի թաթի տակ 1,400,000,000 ժողովուրդ, իր ծովածաւալ տիրապետութիւնը ընդարձակելով աշխարհի չորս անկիւններում, ինչպէս նաև մեր այսօրվայ Քօքս (Cox) դատաւորը վաշինգտոնում խոնարհվեց աւելի պարզ նաազանդութեամբ:

Ձըլայ թէ Ամերիկա մոռնալ և մէկէն Աֆրիկէի վրա խորհել, զի այս դէպքը պատահում է Ամերիկայի մայրաքաղաքում՝ վաշինգտոնում, այն երկրի մէջ, որ իր փորը ունի 20,000 թերթեր, սոցա մեծաշառաչ արշաւանքը, դուռն գոչիւնը, ընդդէմ միլիոններ, անգլիկութեան, մոնոպոլ բողոքներ շանթելը ապստամբին կը ճաթնոտէ, բայց սոքա թէֆէկեօղի (աչքերը գըլխուն գաղթելով վրա ըլլալուն կը կոչուի) նման հեռուն կը տեսնեն ու քովը չեն տեսներ, այսպիսի պահարակելի դատաւճիռ մը, եթէ այս դարուս Աֆրիկէ պատահելու ըլլար, պիտի դարձանային նորէն, և ինչ է այդ: Ընթերցողը շտապում է լսել այդ:

1895, օգոստոս 2-ին վաշինգտոնում քանի մը փոքրիկներ 8—10—11 տարեկան «Քալիֆօրնիա Էլէն» կոչուած փողոցում պարապում են իրենց մանկական խաղերով, կը ճանդիպեն աւուր տանձներին, և մանկական բաղձանաց համաձայն, կը փախաղին սոյն տանձներն ունենալ, որ զօրավար Տ. Վ. Ֆէլկլէտ անուն թընդանթապետի մը տան պարտիզան էր: Միմիտ սոցա մին, ինչես Արին անունով, կը համարձակի քանի մը տանձներ ձգել տանձների ծառէն: Թնդանթապետի աղիկը աս որ կը տեսնէ՝ դուրս կուգայ հրազենով և կը սպաննէ խեղճ Կրինը, սպաննելն ապրանքի կը պատճառէ, բայց աւելի զարմանալին ան է, որ դատաւորը օրիորդ Նիզապէթ, Մ. Ֆէլկլէտ չեն կաշնաւորեր: Օր. Ֆէլկլէտ կերթայ Պալթիմոր (Baltimore), ետ կը բերուի վաշինգտոն և 10,000 դոլարի երաշխաւորութիւն տալով դատը կը ձգուի մեծ դատարանը (Grand Jury): Դատը տեսնուեցաւ փետրուար 25-ին, իր հօրը և բազմաթիւ բարեկամաց ներկայութեամբ:

Դատաւոր Քօքսի նախադատութեամբ, փաստաբանուեցաւ Վալմայ մարդասպանութիւնը: Դատաւոր Ֆօքս դատաւարանց զայն 3 ժամ բանտարկութեան և 500 դոլար տուգանքի, որ և իր հայրը վճարեց, բանտը կը տարուի իր յատուկ կառքով և կը մնայ բանտին գեղեցիկ սրահում 3 ժամ, և ճիշդ ճաշի ատեն տուն կը դառնայ և ճաշն ալ տունը կընէ:

Տեսնեք խեղճ Կրինի մայրը ինչ կըսէ. «Ես սիրով կը թողնում զայն Աստուծոյ ձեռքը, սըրտումս չարութիւն չունիմ, բայց գիտեմ, թէ կը սիրէի իմ փոքրիկս, որ դնաց, եթէ ինքը գէշ էր, ես կը վերցնեմ իմ ձեռքս և կըսեմ, որ աղէկ էր քան ասանք, սակայն աղէկ տղայ մըն էր: Իր ապագան հպարտութեամբ և ուրախութեամբ կը գիտէի, մահը լաիեց՝ սա աղէկայ գնդակով, ու իմա աղաւ կործակուի օր. Ֆէլկլէտ և իր բարեկամը զգան թէ կատարելապէս արդարութեամբ դատուեցաւ, բայց այդ կարծիքը թող Աստուած ինձ ալ չը չնորհէ, Աստուծոյ կը թողում»:

Ահա, ընթերցող, այս է, որ յառաջ բերի, թէն քանի մը թերթեր ձեռնում են, բայց կարող չեն ծախելու սոյնպիսի դատաւորի խիղճը, որոնց խղճերու վրա բարգելում են պաղ արծաթէ դոլարներ: Մի քանի տանձի համար գնաց, մարեցաւ խեղճ Կ. Կրինի կեանքը: Ապրիլի Քօքս, ապրիլ Ամերիկան, ապրիլ մարդկութիւն և ապրիլ դրամ... Այդ անիծեալ դրամը, որ և ճշմարտութիւն, և արդարութիւն և ամեն ինչ կը խեղդէ:

Ազ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«НОВОСТИ» լրագրին հեռագրում են Միլի-նից հետեւալը, «Եւր մինիստր-նախագահ մար-

